29 նոյեմբերի 2018 թվականի N 1367 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 522-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կառուցվածքը, անվանացանկը և հաստիքացուցակը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի N 919-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 522-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կառուցվածքում ընդգրկված ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչությունն անվանափոխել ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության.

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությունում «ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչություն» բառերը փոխարինել «ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչություն» բառերով.

3) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածում

ա. 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ. ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչություն.

NN ը/կ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	Պետ	1
2.	Պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ)	2
3.	Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	6
4.	Հատկապես կարևոր գործերով քննիչ	6
	ԸՆԴԱՄԵՆԸ	15

»,

բ. 1-ին կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչություն.

NN ը/կ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	Պետ	1
2.	Պետի տեղակալ	2
3.	Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	4
4.	Հատկապես կարևոր գործերով քննիչ	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	9

»,

գ. 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը «վարչության պետի տեղակալ» բառերից հետո լրացնել «(հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ)» բառերով,

դ. 3-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին.

NN ը/կ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	Պետ	1
2.	Պետի տեղակալ	2
3.	Հատկապես կարևոր գործերով քննիչ	3
4.	Ավագ քննիչ	9
5.	Քննիչ	4

	ԸՆԴԱՄԵՆԸ	19

»,

ե. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն.

NN ը/կ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	Պետ	1
2.	Պետի տեղակալ	2
3.	Բաժնի պետ	3
4.	Բաժնի պետի տեղակալ	3
5.	Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	4
6.	Հատկապես կարևոր գործերով քննիչ	4
7.	Ավագ քննիչ	10
8.	Քննիչ	10
	ԸՆԴԱՄԵՆԸ	37

»,

զ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 10. Կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն.

NN ը/կ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	Պետ	1
2.	Պետի տեղակալ	2
3.	Բաժնի պետ	2
4.	Բաժնի պետի տեղակալ	2
5.	Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	5
6.	Հատկապես կարևոր գործերով քննիչ	4
7.	Ավագ քննիչ	12
8.	Քննիչ	8
	ԸՆԴԱՄԵՆԸ	36

»,

է. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչություն.

NN ը/կ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	Պետ	1
2.	Պետի տեղակալ	1
3.	Բաժնի պետ	2
4.	Բաժնի պետի տեղակալ	2

5.	Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	3
6.	Հատկապես կարևոր գործերով քննիչ	3
7.	Ավագ քննիչ	4
8.	Քննիչ	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	18

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 4
Երևան